ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի, 2020 թվականի N 6-Լ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու անհրաժեշտությունը՝ ո ր ո շ ու մ ե մ.

1. Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահի նախաձեռնությամբ 2020 թվականի մայիսի 27-ին՝ ժամը 12:00-ին, գումարել Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի հերթական նիստ, Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեում գտնվող իր գործունեության վայրում:

2. Սույն որոշման 1-ին կետով նախատեսված՝ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նիստը գումարել հետևյալ օրակարգով.

    1. «Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի աշխատակազմ» պետական հիմնարկի կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգն ամբողջությամբ չկայացած հայտարարելու մասին հարցը:

    2. Հանրային հեռուստրառադիոընկերության խորհրդի 2010 թվականի սեպտեմբերի 6-ի № 50-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին հարցը:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

27 մայիսի, 2020 թվական

ք. Երևան